

«ՀԱՐՃԸ» պոեմ

Փառք սարբինային. Ներոն կ'արբենա:

...զի յոյժ գեղեցիկ էր, և երգեր ձեռամբ:
ՄՈՎՍ. ԽՈՐԵՆԱՑԻ, ԳԻՐՔ Բ

Ա

Գարնանամուտ երեկո մ'իր պալատին մեջ մարմար,
Բակուր, Սյունյաց Նահապետ, շքեղ հանդես մը կու տար,
Երբ Ուղևոր մը հանկարծ մըրըրկարշավ կը հասնի
Լուսնկափայլ ճամբայեն՝ մեծ դրրան քով արքենի:
Ձին կը հևա, ու բերնին փըրփուրն՝ հողմեն միշտ խլված՝
Կը թըրջե թամբն համորեն, ասպանդակներն ոսկեմած:
Հեռուներեն ան կու գա, զայս կը մատնե թե՛ փոշին,
Որ դիզվեր է խավերուն մեջ թիկնոցին թավիշին,
Թե՛ նըժույզին վըրնջունն աստեղացունց մաքրությամբ՝
Որ կը խընդրե ախոռին գոլուտ հանգիստը անթամբ:
Բակուր այդ հյուրն իր անձեն և անունեն կը ճանչնա.
Բագրատունին Տըրդատն է, հըզոր իշխան ու փեսա
Տիրան հայոց արքային, որ կը փախչի Մարաստան.
Կը փախչ ան՝ զի կինն իր, Տիրանի դուստրն աննըման,
Գանակոճեր է խըստիվ, պալատեն դուրս արտաքսեր,
Խուզելով, իբր անարգանք, անոր խարտյաշ գանգուրներ:
– «Տրդա տ, – կ'ըսե Նահապետն, – այս զիշեր քուկդ է իմ տուն.
Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասուն.
Մըտի՛ր սրահը տոնին, թող իրարու դեմ փըշրին
Մեր բաժակներն, ու մեր սերը մըկըրտե թող զինին»:
Եվ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի
Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նըստի
Գահի մը վրա՝ որուն լայն թիկնատեղն է քանդակված
Բագուսը՝ եզ մ'որթերով պըսակելու ըզբաղած:
Մեղանի շուրջը արդեն Մեծամեծերն հայկազուն
Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն
Աստիճանին համեմատ, այլ սուրերու մեծության:
Հոն են ճորտերը Սյունյաց գավառներուն երկտասան,
Լերան ազատ զավակներ, միշտ գրահի մեջ կուրծքերնին՝
Որոնք հըզոր կումբի պես ջահերու տակ կը փայլին:
Հոն կան նաև բըղեշխներ, ազատանին քաջարի՝
Որ կը պատմեն թե ի՛նչպես կ'որսան վարազը վայրի
Ազնըվատոհմ սեպուհներ ոսկեճարմանդ խլաներով
Գինվո բաժակ ի ձեռին կը ծիծաղին կես զինով:
Պալատին մեջ ծով մը կա ծիծաղներու և լույսի՝
Որ գաղջորեն ծուփ առ ծուփ դռներեն դուրս կը հոսի:
Կոչնականները զարմիկ պատերն ի վար կախեր են

Որսի գալար շեփորներն ու վահաններն ոսկեղեն.
Եվ նիզակները, դեռ թաց վարագներու արյունով,
Տրծակ տրծակ կը հանգչին հրսկայափեղկ դրբան քով:
Լայնակոնք սրբահր քրսան սյուներով է կառուցված՝
Որոնց վրբա կը շողան քրսան ջահեր դեմ դիմաց.
Եվ այն քրսան սյուներուն մեջեն քրսան գերիներ
Կը բերեն թանկ սաներու վրբա՝ խորոված երեներ՝
Որոնց շոգին քրմապարար կը բարձրանա ոլորուն
Ջահերուն շուրջը կազմելով խըլատեռեր ծրփծրփուն:
Ըսպասներն ալ սեղանին մեծարժեք են. և կարծես
Արծաթագոծ դրգալներն ու դանակները նույնպես
Փողփողումին տակ լույսին փայլակներ են աղմըկոտ՝
Որ կը ծրփան դիպակյա նըվարտանին վրա փութկոտ:
Ծաղկակալներ են դրոված երկայնքեն ի վեր սեղանին,
Որոնցմե եղկ բուրումներ շուրջը արբշիռ կը սըփոին.
Ծաղիկներուն ընդմեջեն, քրքրփջներուն հետ թըրթռուն,
Կը նըշմարվին ըսպիտակ ակռաներն հույր ճորտերուն.
Եվ գինիին թանձըր հոտն և խահերուն գոլորշին
Վեր բարձրացած՝ կը սքողեն կատաղությունն այդ ճաշին:
Կու գա համեղ գերերին՝ որով Սյունիքն է առատ,
Ջոր եփեր են տատրակի սըրտիկներով անարատ:
– «Աղավնիի սիրտ ուտենք, – կը կոչէ ճորտը Բալի, –
Որ ունենանք վագրի լյարդ»:
– «Ես այդ մասին ավելի, –
Կը կատակե հանկարծ մին, – կընտըրեմ սիրտը՝ կընտջ»:
Ծիծաղելով այն ատեն կից վերնատունը ամբողջ
Կ'ալեկոծի, ուր ժողովված հայ տիկիներ բազմական
Կ'ընեին նույն խըրախճանքները նույն շուքով տոնական:
Այն ատեն ներս կը մտնեն երկու ջուխտակ գերիներ
Կրելով երկու լախտ վարագ սաներու վրա ոսկեհեռ.
Եվ ուրիշներ նույն թիվով՝ իրենց ուսին վրա ունին
Ըսկուտեղները նուռին, սափորները հորդ գինիին.
Հաղթանակն է այս խրախին: Հեղեղ մ'հանկարծ վարդերու,
Իբրև ամեն տիկին արձակեր սիրտն իր աղու,
Վերնատունեն կը տեղան կոչնականաց վրա գինով:
Քանի մ'ասպետ կը կոփեն վահանն իրենց աշտեով:
Աղավնիներ ավասիկ կամարին տակ կը ճախրեն,
Եվ ծայրն իրենց թներուն մըխըրճելով ծուլորեն
Շատըրվանին մեջ՝ որ լույս կ'ողբա բակին առընթեր,
Կու գան իրենց թռիչներեն վար անձրնել մարգրիտներ:
Ու վարդ, տատրակ հոն խառնված հեղեղներով ճաճանչի
Կ'ստեղծեն դրախտ մ'ուր կարմիր հեշտության նուռը կ'աճի:
Մատըրվակներ ավասիկ կարապնավիզ սափորով
Բաժակներուն մեջ գինին կ'հեղուն դեմքով մ'անխըռով:
Բագրատունին այն ատեն, կորովաբիր Տըրդատես,
Դաշխուրանն իր վեր կ'առնու, և.– «Ասպետն է՛ր, – կ'ըսե, – ես
Վանատուրին սերմնահորդ, և տըրփածոց Աստղիկին,

Անոր՝ որ հուրն է արու, անոր՝ որ հողն հեշտագին
Կ'ըմպեմ ի փառս: Անոնց տոբին ու համբույրները հավետ
Այգիներուն մեջ ձեր թող ծավալանան ծաղկավետ»:
– «Ձեր Թագավոր աներոջ, – կ'ըսե Բակուր, – սուրբ կյանքին
Ըմպենք որ մեզ կը պահե խաղաղության մեջ հեշտին»:
– «Թագավորի՛ն, որ կ'հանգչի, – աղաղակեց ճորտ մ'հանկարծ, –
Ձյուններուն մեջ Մասիսի»:
Այս հայտնությունն հեղակարծ
Ներկաները ապշեցուց: – «Մեռա՛վ Արքան մեր հայոց...»:
– «Արդ իր դիակը կ'իշխե հավերժանիստ սատին ծոց:
Գուժկան մ'երեկ ագռավի երագությամբ հոս հասավ,
Պատմեց թե ի՛նչպես Տիրան խեղդըված է բըքագրավ:
Կ'ըսեն թե թագը միայն ձյուններեն դուրս է մնացած,
Որուն վրա կը շողա դեռ հայ արևը Մասյաց»:
Շըրջան ըրավ սև լուրն այս պալատին մեջ բովանդակ
Գինեփրփուր բաժակե մ'ավելի ե՛վըս արագ,
Որ միմիայն արբեցուց բերկրանքներով անպատում
Տըրդատի սիրտն՝ որ մինչև արքային մահն էր սըրտում:
– «Խըմե՛նք, – ըսավ, – ու տոնենք Արշակունի գահերուն
Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փըցուն»:
Եվ հազիվ հազ շըրթներուն դըրավ գավաթն հրահոսան՝
Վերնատան մեջ աչքերն իր գույզ մ'աչքերու դիպեցան:
Կին մը իրեն կը նայեր, կը զգար սըրտին մեջ շըմոր.
Իր կազմին վրա կ'հիանար, առնագեղ, խրոխտ ու հըզոր,
Հըզոր՝ վիզովն առյուծի և բիբերով աստղահեռ՝
Որոնց բոցեն այրելու համար անգամ մ'իսկ բավ էր
Որ անոնց մեջ հանդըզներ առնաբաղձ կին մը նայիլ:
Հըզոր՝ մարտիկ գըլուխով, լայնշի լանջքով անարգիլ
Որ ճոշանին մեջ կ'ուռեր կոհակի պես փըրփրագեղ.
Հըզոր՝ թիկնով մեծադիր, բագուկներով առնագեղ՝
Որոնց միջեն կը սիրեն կիներն իբր օ՛ձ գեղածալ
Բյուր ձևերով գալարվիլ ու ծըվարիլ ու տաքնալ:
Վերնատան կինը սարսռաց: Տըրդատ մեկ ձեռքը հենած
Սեղանին վրա, մյուսով տաշտը բերնին գըլխիբաց,
Անոր կապույտ աչքերուն հառած աչքերն իր մըթին
Խըմեց երկա ր– փըրփուրեն մինչև մըրուրն– իր գինին:
Հետո ծոցեն դուրս քաշեց խուրձ մը դեղձան մագերու
Մութ ամպեն դուրս մացառվող ճաճանչներու պես աղու.
Եվ անով իր գինիոտ բերանն աղեկ մը սըրբեց...
Անոնք մագերն էին իր գոռոզ կընոջ՝ գոր բրածեծ
Ըրավ ու ա՛յսպես ահա ծաղրեց այն էզն անուղղա,
Եվ ապշեցուց ամենքն այդ իր անսովոր գործին վրա:
Հազիվ Տըրդատ սեղանին դըրավ գավաթը թափուր՝
Լույսերու հոծ ծովուն մեջ թնդաց սըրահն ընդհանուր.
– «Վարձա՛ կն ահա, տեղ բացեք, վարձա՛ կը, վարդ տեղացեք.
Մագերուն մեջ, ոտքին տակ մարգարիտինե՛ր լեցուցեք»:
Մանդուխներեն վերնատան վար կ'իջներ կին մը խաժակ.

Կը թըռվոյային գըլխուն շուրջ աղավնիներ ըսպիտակ:
Ճաճանչավուխտ քողին մեջ աստըղ մ'էր ան՝ որուն մեծ
Աչքերուն մեջ սևեռուն Տըրդատ գինին իր խըմեց:
Այդ ժամանակ սրահ մըտան հինգ ծերունի գուսաններ,
Ուսերուն վրա վիժանուտ գանգուրներով լուսահեր.
Ոլորակեց տավիղն հեշտ, փանդիոն հնչեց փառակոչ,
Նըման արծաթ կարկուտի երգ ջաղբեց դա՛ փը դողդոջ.
Եվ յոթնադի քընարին որովայնին մեջ տոսախ
Նըվագի ծով մ'ըսկըսավ մըրըրկոտիլ աղեբախ:
Հետո հանկարծ միացած բոլոր լարերն իրարու
Պանծացուցին անգամ մ'ալ փառքերը հին դարերու,
Երգը հըզոր դիքերուն, Դիցուհիի ոսկեմայր,
Երգն աստղահմա քուրմերուն՝ որոնք բագնին վրա մարմար
Վըզան օձեր այրեցին բոցերուն հետ ծառացող.
Երգն՝ ասպետի մը գարմիկ, դյուցազներու զինաշող,
Որոնք նըման կայծակի տեգերն՝ իրենց պիրկ ձեռքին՝
Փաղանգներուն կազմը կուռ արյունառուշտ ճեղքեցին.
Հընչեցուցին երգերն հուսկ մեհենական պարերու,
Մերն հայկազուն կույսերուն և հարձերուն գինարբու՝
Որոնք այգվույն գովալից հովանիին տակ պառկած
Լույս ծոցն իրենց կը թողուն սեպուհներուն համար բաց:
Կոչնականները համուռ դեպ գուսանները դարձան,
Որոնց մեջտեղ ըսկըսած էր պարել կին մը դեղձան:
Վարձակն էր ան, Նագենիկ, նագելագեղ անունով:
Հասակն ամբողջ կը թըրթռար բարտիի պես հողմախոռով.
Դաշներգը իր ջիղերուն դաշներգին հետ լարերուն
Կը միանար, կը սըփոեր համանըվագ մ'հարաճուն:
Յոթն հարձերն հերքը խարտյաշ մատվըներով նախանձոտ
Արաբական յուղի մեջ օձաներ են քաղցրահոտ.
Եվ գըլխուն շուրջը պըսակ մը վարդերու հյուսեր են՝
Որոնք եթե ճըզմըվին անշուշտ արյուն կը ծորեն:
Կը շողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողէջ
Աստղերու նման ցոլալով անրակներուն փոսին մեջ.
Արմունկեն վեր աջ բագուկը կը խածներ սեղմորեն
Նուրբ մարգրիտով հելուզված ապարանջան մ'ոսկեղեն.
Իսկ վիզեն վար մինչև ծայրն ըստինքներուն սևապտուկ
Կը բոլորվի վառ մանյակ մը լույսերով հեղեղուկ:
Եվ այնքան նուրբ է գառքաշն՝ որ կը բըղխե դեպի դուրս
Ագղըրներուն գաղջություն և կաթնագույնը սընդուս.
Մուճակներուն մեջ խարտեշ կաղապարված ոտքերն ա՛լ
Դռույթ տալով կը սկըսին հատակին վրա պար դառնալ:
Կոչնականները լըռիկ հիացումով քարացած,
Մարմնակարկառ, ապշոպյալ, աչուներով լայնաբաց,
Կը դիտեն զինք: Նագենիկ նախ կ'օրորե մեղմորեն
Ալապաստրե ուսերուն վըրա գըլուխն հըրեղեն՝
Ներկաներուն շըրջելով գույգ մը աչքերը աղվոր՝

Ուր կ'ընկղմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլե վիրավոր:
Վեր կը վերցնե հուլանի բազուկներն իր հուլորեն
Լայնշի քողին կապուտակ խաղաղության ընդմեջեն
Զույգ մը տոսախ բամբիռները մատերուն մեջ ճարտար
Հանկարծակի կը հընչեն, կ'ըլլան պարին կառավար:
Մարմինն ընդհուպ կը զովա, կու տան ոտքերը դըռույթ,
Եվ ան իր իսկ շարժումին անդունդին մեջ հորձանուտ
Կարծես վայրկյան մը այլևըս աչքերե կ'անհետի`
Ինչպես երկնի մեջ կորսվող լուսադայլայլ մեղեդի:
Օ՛, այդ մեծ պարն հեթանոս` որ Աստղիկի կը ձոնեն,
Գեղեցկության այդ աղոթքն, աղոթքը այդ մըսեղեն.
Օ՛, այդ իրանը ճապուկ ելևեջովն ըստինքին`
Որոնց մեջ կաթն իսկ կ'եռա հուզումներեն սաստկագին.
Օ՛, թևերն իր լուսածղի` օձերու պես պարարակ
Կարծես երկար կրթըված կախարդ սրինգով ներդաշնակ.
Եվ զհստերն իր սարսռագեղ, գեր երաստանը շամբույշ.
Եվ բոլորին իբր առանցք մեջքն ուռիին պես քընքույշ`
Որուն շուրջ մարդ պիտ' ուզեր բազեղի նման փաթթըվիլ,
Եվ վերջապես հյութասպառ բաղեղի նման թառամիլ:
Բամբիռներն իր կը հընչեն ձեռքերուն մեջ սաստկորեն
Իբրն օրենք մարմինին բյուր ձևերուն հոյաշեն.
Բամբիռնե րն իր կը հընչեն, ու անոնց երգը բյուրեղ
Կը քաղցրանա մեղրի պես ջահերուն տակ լուսագեղ.
Եղունգներով հինավրած մատերեն վար աղածրի`
Դաշնակություն մ'հրաշալից մազերուն մեջ կը ծորի:
Բամբիռներն իր կը հընչեն, այնքան ճարտար` որ կարծես
Անոր ձեռքերն Ապոդոն թաթախեր է տարփակեզ
Սըրտին մեջ իր տավիղին: Գործիքին ձայնը կերկեր
Կը զեղու սրահն` ուր շատոնց գուսաններն ա՛լ չեն նվազեր:
Կոհակներուն մեջ լոզոդ աղկիռնին հանգունակ
Ան կը լողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ`
Որոնց ի լուր տատրակներ ահա կու գան խառնըվիլ
Ցանցին մեջ իր մազերուն, իր մազերուն հիատեսիլ`
Որոնք, ալիք առ ալիք, կ'երթան սըփռիլ ման ի ման
Ասպետներուն գըլխուն վրա արշալույսի մը նըման:
Կոչնականները գինվո մեջ թաթախված, տրոփագին,
Բոլորը լուռ, սալացած` ըզմայլանքեն գեղեցկին
Կը դիտեն մրրիկն այդ կընոջ զանգուրներուն մետաքսե:
Ան կը ճախրե , կը ճախրե , կատաղորեն կը ճախրե :
Երբոր ետև կը թեքի` կուրծքին վըրա հոյաշեն
Բըլուրի պես կը դիզվին ըստինքներն իր սարսըռալեն.
Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,
Կ'երթան փըփրիլ հատակին, հոն կազմելով ոսկի ծով.
Ան կը ճախրե , կը ճախրե , սանձակոտոր կը ճախրե ...
Հոզվույն մեջ` ծով, շուրջը` լույս, ան Կիպերյան Աստղիկն է`
Որ իր չորս կողմն հավաքած աղավնիները լուսեղ

Փորձեր կ'ընէ թրոշելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,
Եվ հեհեռուն, ծիծաղկոտ, վարդի մը պէս բրնձնրկած,
Վերջին թափով կը սուզի կապույտին մեջ վերասլաց
Թողլով որ քողն ամպերէն հորձանապտույտ իյնա վար
Տիոնիայան բագնին վրա, գինիին մեջ հըրավառ:

Ա՛յսպէս պարեց վարձակն ալ, մինչև որ քողն հոգիին
Հոն թաթախեց դիրտին մեջ ամեն մարդու բաժակին:

Ա՛լ հոգնած էր ու քըտնած, կ'ուռեր ծոցն իր լուսեղէն,
Երբոր վերջին ճախրին մեջ Տրդատ բրնձեց բագուկէն
Եվ ծունկին վրա նըստեցուց, գգվեց գըլուխն ոսկեհեր:

Վարսերն ի վար շիթ առ շիթ կը ծորէին քըրտինքներ.

Ձեռքերուն մեջ դեռ տենդոտ, Բագրատունվույն ճոշին վրա

Կը դողային բամբիոներն իր մարմնույն պէս դյուրազգա:

Տըրդատ մատերը անոր համբուրելով մի առ մի

Եվ շամբշելով անոր հետ զերդ սեղեխներ վաղեմի.

– «Նահապէ՛տ, ո՞վ է, – ըսավ, – վարձակը այս լուսաստինք:

Եթէ Աստղիկ երկնի մեջ Վահագնի մ'օր հանձներ զինք,

Ու կաթիլները սերմին ըլլային նույնիսկ աստղեր՝

Դարձյալ այսքան չըքնաղ ծնունդ մը երբեք չէր բողբոջեր:

Այս կինն ինձ տուր, եթէ չէ օրեն՝ որ մենք ընենք վեճ.

Արշալույսին թող մեկնիմ արշալույսն այս գրկիս մեջ»:

Բագմականներն ըսկըսան նախանձահույզ քըրքըջալ.

Բակուր ծածուկ մախանքե մ'ակոռներն իր ձյունափայլ

Սեղմեց. և նուռ մ'որ ձեռքին մեջ բրնձած էր այն ատեն,

Ըսկըծանքեն ըսկըսավ ճըմլել: Ըսավ.– «Իշխա՛ն քաջագեն,

Վըրաց երկրեն, ուր կիները կը ծաղկին վարդի պէս,

Զայն նիգակովս եմ շահեր, մարտիկներու ընդդեմ վես

Մղելով երկար պայքարներ: Այժըմ ներե որ ըսեմ՝

Թե իմ հարձս է, և չ'ըլլար քեզ աղախին մը նըսեմ:

Եթէ կ'ուզես՝ որ մեր գույգ բաժակներն այս մըտերիմ

Հագիվ թափուր գինիե, չլեցվին արյամբ ոխերիմ՝

Թո՛ղ գայն, իշխա՛ն»: Բնավ չանսաց Բագրատունին սըրարբած

Սեղանեն վեր բարձրացուց դաշխուրանն իր գինեմած

Ու ձեռքովն իսկ գայն խմցուց, ծունկին վըրա, վարձակին՝

Որ կը ժըպտեր ըմպելու ատեն ժըպտով մ'հեշտագին:

Իր գողտըրիկ բերանին երկու կողմեն ընդհուլով՝

Թափեցավ քիչ մը գինին ու ծոցն ի վար սահելով՝

Գընաց լճակի պէս կարմիր ժողվիլ պորտին մեջ անհայտ:

Երբ դեռ բոսոր էին կզակն ու շըրթունքները, Տըրդատ

Զանոնք առած բերանին մեջ համբուրեց կըտղանքով՝

Զվարթ հեղուկին մնացորդն ըսպունգի պէս ծըծելով:

Լըռեց սրահը համուռ: Բոլոր դարձած Բակուրին

Կը նայեին, որ կը լմեր դեռ նուրը մեջն ագուռին:
Ամեն մարդ հոն թափվելիք արյան մը հուրը կը զգար...
Նահապետն ա՛լ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար.
Գնաց որ հարճն ազատե, ջախջախե գըլուխն Ասպետին՝
Որ կինն իր տան մեջ կը լկեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին:
Այս որ տեսավ Տըդատես վարագացավ ու խոպաց.
Հրեղեն սյունի մ'էր նըման, դահլիճին մեջ՝ վերամբարձ.
Կոպիճներուն մեջ աչքերն ըսկըսան ժիր թավալիլ
Մերթ ծովուն խորն ընկլուզվող գունդերու պես հրատեսիլ:
Ձախ թևով հարճը գըրկեց, հետո՝ «Հա՛, հա՛, – քըրքըջաց, –
Էգ վագրին հոտն ըմբռնինել արու վագրի՛ն է տըրված»:
Եվ միշտ ժայռի պես կանգուն, շընչելով բոց աչքերեն,
Հուժկու ձեռքով սեղանին վրայե խըլեց, իբրև զեն,
Մեծաքանդակ ըսկուտեղ մ'ամբողջ պղնձով կուռ ձուլված,
Գազանացավ, փըփըրեցավ, շամբշտացավ ու մըխաց.
Եվ ուղղակի արձակեց գայն Բակուրի ճակատին...
Վերնատան մեջ ահեղ ճիչ մ'արձակեց տան տիրուհին,
Ճորտ ու սեպուհ բոլորն ալ դուրս պուղեցան գահանդած.
Որոնց բազուկն էր միշտ վատ՝ երբ հոգին էր սըրարբած:
Մակայն կարծես մըրգակալն այն վրիպեցավ հըրաշքով,
Եվ Բակուրի լոկ մեկ ունկն արյունատուշտ խլելով՝
Գընաց բաղիսիլ դիմացի մարմար սյունին մեծադորդ
Թոթափելով անկե վար կուճեր, կայծե լուսահորդ:
Ումանք սատար փութացին Նահապետին կարեվեր՝
Որուն խըլված ականջեն, ճըմլված քունքեն կը հոսեր
Հոն գինիի սափորին մեջ արյունն իր թըխագույն,
Այն ժամանակ Նազենիկ սարսափահար, հանկարծույն,
Փաթաթվելով Տըդատի պարանոցին՝ ողոզեց.
– «Այս հարկին տակ, ո՛վ ասպետ, ա՛լ բաժինս է գան ու ծեծ.
Դուն որ գիտցար զիս վտանգել, ազատե արդ շուտափույթ,
Երբ ես հոժար խըմեցի ձեռքեղ գինին քու սիրույդ՝
Հարկ է ասկե վերջ խըմեմ Բակուրի թույնն ոխության.
Դուն հոս արյուն թափեցիր, և պիտի ե՛ս քավեմ գայն:
Զիս հեռացուր այս երկրեն, եթե չէ գործ մ'արքենի
Որ ասպետի մը վրիպած հարվածը կին մ'ընդունի»:
Ու ավելի ցած ձայնով հարեց. – «Ես քեզ կը սպասեմ
Արշալույսին՝ որ մոտ է: Մեծ դրան քով արեգդեմ
Կա թուզի ծառ մը՝ որուն սաղարթներուն ընդմեջե
Պատուհանիս ճրագն առկայծ ճամբորդներն հար կը տեսնեն:
Հոն կը սպասեմ ես քեզի վարդենիի մը նման,

Որ կոկոններն իր քանա պիտի կուրծքիդ վրա տիտան»:
– «Ձիուս առջի խըրխինջին պատրաստ եղիր, Նազենի՛կ,
Դեռ ճրագդ արփվույն շառայլեն չընըվաղած՝ կը մեկնինք»:
Ըսավ Տրդատ: Թուրը մերկ միշտ ափին մեջ շողարծարծ,
Տալով կամա երևույթը մեկնումի մը անդարձ,
Գընաց թամբեց երիվարն ու խավարին մեջ, անտես,
Անհետացավ քառատրոփ, փայլակնացայտ ամպի պես:
Կոչնականներն ահաբեկ, կոչնականներն հիագարհուր,
Գինո՛վ ու վա՛տ, մի առ մի պարպեցին սրահն ընդհանուր.
Լոկ կույր գուսան մ՛երգին մեջ անվերադարձ տեւլացած՝
Դեռ լուռության մեջ կը նվագեր սյունի մը հաղթ կոթընած:

Բ

Ահա առտվան շողերեն հագեր է վարդ ու սուտակ
Պատուհանին առջևի թըզենի ծառն ընդարձակ՝
Որուն ետն հարճն արթուն.– «Ինչո՞ւ չեկավ, – կը խորհի, –
Արտույտն ահա արձակեց կալին մեջ երգը բարի.
Եվ պալատին պահապան շունն արթընցած ման կու գա
Բակին մեջ՝ մերթ միզելով պատերն ի վեր շըրջակա:
Ինչո՞ւ չեկավ, ո՞վ Երկինք»: Հորիզոնեն հեղակարծ
Արփվույն ճաճանչն անդրանիկ սլացավ ինկավ շողարծարծ
Նազենիկի խուցին մեջ. դալկացավ լույսը ճըրագին:
Օ՛, ի՞նչ խրխինջ, ի՞նչ դոփյուն, ի՞նչ փոթորկում թանկագին...
Կու գա իշխանն ազատել զինք Բակուրի նախանձեն:
Պատուհանին ներքև՝ է Տրդատ ձիուն վրա արդեն:
Բերկրանքեն հա՛րճը խայտաց. զեղան աչքերը վըրդով
Անպատմելի խընդությամբ, ինչպես երկինքն՝ արևով,
Գիշերն ամբողջ ինք հոն էր, գով խավարին մեջ արթուն,
Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն.
Աստղերուն տակ աղոթող բագոսուհվո մ՛էր նման՝
Վարդերը դեռ հանդեսին մազերուն մեջ ցիրուցան,
Եվ լանջքը մերկ՝ որուն վրա թափված գինին խըրախին
Տակավին միշտ կը սըփոեր իր զըվարթ բույրը չորս դին:
– «Ձեռքդ երկարե, 'սավ Տրդատ»: – «Դու գիրկդ բաց, կը ցատկեմ»:
– «Գըլուխդ, ըզգո՛ւյշ, չըփշրես լանջապանիս զրահին դեմ»:
Եվ Նազենիկ անհամբեր հեղեղին հետ վարսերուն
Ասպետին մռայլ ծոցին մեջ նետեց ինքզինքը սարսռուն,
Եվ զայն հեղ մ'ալ ողողեց մազերովն իր դարալիր:
Դափրեց նըժույզն և ռունգերը փեռեկած լայնալիր՝
Հորիզոնին դարձուց գլուխն ու մըտրակի մ'հարվածով

Թաղվեցավ իր արշավին ամպրոպին մեջ փոշեծով:

Փա՛ռք մեծագոր կենցաղին ասպետական դարերուն՝
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Ջորությունը արբուն,
Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկն, Ջորության՝
Փրփրփուրներու Դիցուհին ըստինքներով ռոշնական:
Փա՛ռք ձեզի միշտ, գանգրահեր ո՛վ ասպետներ արդընկեց,
Որոնց զրահով վերտրված լանջքերուն տակ բաբախեց
Սիրտ մը հավետ անձնըվեր՝ տրկարներուն, ընկճվածին,
Եվ գեղանի կիներուն, անոնց մարմնույն բյուր գանձին:
Փա՛ռք ձեզի միշտ ձիամարտեր, մկունդխաղեր շանթասլաց՝
Որոնց օղին մեջ շաչուն տեգերն հանկարծ բռռընկած՝
Կայծակներու խաղն եկան երկրիս վրա փոխադրել.
Վիշապասպան սուսերներ, ժանգոտելու անընդել,
Կառարշավներ փոշեմուղ, գուպարահաղթ ոգորներ
Շառափնաթափ տեգ տեգի, կումբ կումբի դեմ ոսկեհեռ
Փա՛ռք ձեզի միշտ, ո՛վ որսեր թըրթոռուն ձայնով շեփորին,
Երբ լիճին քով վիրավոր կ'իյնա եղնիկն ողբագին,
Եվ վարագներ արդնահար կը թավալին մարգին վրա՝
Որոնց կողեն արյունն հորդ կրակի պես կը մըխա:
Փա՛ռք ձեզի միշտ ավարներ, հափափումներ կիներու՝
Որոնք տրվին իրենց տարփն ու համբույրները աղու
Առյուծներու քաջության, և ո՛չ ոսկի հորթերուն
Որոնց սիրտերն առավ լոկ սուրերու ծայրը փաղփուն:
Փա՛ռք ձեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նըման գինիին:
Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կը տիրե.
Փոխան տեգին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է՝
Որ կը շողա մութի՛ն մեջ, կը ժանգոտի՛ արևին.
Ոճիրներն արդ խավարի լռության մեջ կը դարբնվին
Մըխտոտ ճրագի լույսին տակ ծրռած գունատ մարդերեն:
Երբ արեգակը նընջե՝ մեղքերն հայնժամ կը գործեն:
Չեն պաշտեր կնոջ մարմինին դաշըն ձևերն հըրահրուտ
Լոզցըված բյուր ջահերու շառայլներով հոսանուտ:
Կինը մարդուն միացնողը Աստղիկի սիրահող
Լուսեղ մատերը չե՛ն բնավ, այլ շանսըխուրը ցեխտոտ:
Գեղեցկությունը ծընունդն է Ջորության հորձանքին՝
Ինչպես մարգրիտն օվկիանի անդունդներուն մուլեգին:
Բայց այսօր չե՛ն քանդակեր սուսերներով կորովի
Գեղեցկության սուրբ բագինն՝ ուր իգությունը խընկվի:

Բավական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր,
Որ աճուրդի հանված սերը գնեն մարդիկ քրեիքուր,
Մեր վաճառված, ոչ նվիրված՝ ինչպես պըսակ սարդենի
Զոր հերոսին համար սուրն աստվածներեն կ'ընդունի:
Եվ այժմ մարդն այս դարուն, մարդն ըղեղին տակ կըքած,
Ո՛վ ասպետներ հեթանոս, եթե բաղխե ոտքն հանկարծ
Ձեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմկած է,
Անոր հըսկա զանգվածեն կը սարսափի, կը կարծե
Ձեզ առասպել դարերու առասպելյալ գագաններ,
Ո՛վ ասպետներ հեթանոս, ո՛վ ասպետի ոսկորներ:

Գ

– «Տե՛ս, Նազենիկ, ինչպես դաշտն ըսպառեց ձիս վըզանուտ
Ա՛յնքան երագ՝ որ կարծես մոխիրի մեջ բոցանուտ
Մըմբակներն իր խըրվեին: Ան հպարտ է, իմ Սիրուն,
Երբ այդ մագերթը խառնված կը զգա իր հորդ բաշերուն»:
– «Ո՛վ իմ ասպետս և իմ քաջըս, մըտրակե՛ անդադրում՝
Մինչև որ սա անիծված Մյունաց սահմանը թողում:
Մարսափն է դեռ սըրտիս մեջ, բայց մեն մի դռույթը ձիուդ
Հոգիիս մեջ կը սպաննե երկյուղի տրոփ մը անգութ:
Ո՛վ իմ ասպետս և իմ քաջըս, մտրակե՛, անդադրում»:
Այսպես անոնք խոսելով՝ հըճըվանքով մ'անպատում
Կ'արշավերին դեպ Շիրակ: Տըրդատի լայն կուրծքին վրա
Կը հանգչեցներ՝ հարճն ամփոփ՝ գըլուխն իբրև լուսնկա.
Մերթ ոտքերն իր կը զարներ ձիուն փորին տըղընդեր,
Մերթ Տըրդատի անույթին տակեն ետև կը նայեր,
Հորիզոնին շըրջելով կապույտ աչքերն՝ որոնց մեջ
Բերկըրանքներ կը հյուսերին շողերն առեչ առ առեչ
Միշտ մեծցնելով հույսը զվարթ՝ ծախված ճամբուն մեծությամբ:
Շանթ կը տեղար արեգակը երկընքեն վար անամպ
Իր տոթին տակ խեղդելով կենդանությունը շուրջի.
Կարծես հողին մեջ դողված ըլլար ամեն մեկ ճըճի.
Միմիայն մերթ կը լսվեր բըզոցը թավ զամբուռին,
Որ ա՛լ հոգնած ընդերկար հալածելե կենդանին՝
Արշավանքին փոշվույն մեջ կանհայտանար խորամուխ:
Անոնք իրար փաթթըված կ'ամբարտակեն սարին գլուխ:

Խուլ դըրրողուն մ'հեռվեն եղավ հանկարծ լըսելի,
Կարծես գետնին ընդերքեն անցներ ամպրոպ մ'ահռելի:
Տըրդատ շըրուշակը դարձուց, և երիվարը խոկուն

Օամճըմէլէ դադրեցավ պահ մը լըկամը փըրփրուն:
Վարը, դեմի հովիտեն դեպի գագաթ ծառացան
Ձիավորներ զինավառ մըրրկարշավ ու դաժան:
Ոմանք աղեղ ունեին և ոմանք լախտ ու տապար,
Ոմանց տեգերն ուղղաձիգ արեգակին տակ փարփառ
Հանկարծակի սարեն վեր փայլատակներ ճայթռեցին.
Բակուր մեջտեղն էր անոնց աշտանակած ահեղ ձին.
Կու գար լուծել իշխանեն վըրեժ, պատժել հարձն անխիղճ՝
Մորթելով հոն՝ փոխանակ գայն փըրկելու աղծապիղծ,
Կոչնականները բոլոր զինված էին արդ իր հետ.
Երեկ զինով հըղփացած, այսօր արյան հակամետ:
Երբ Բագոսեն վերջ որրեց զանոնք Արեսն արդընկեց՝
Հանդիսատես վատության հուշն հոգինին զայրագնեց:
Ըսկուտեղին արհավիրքը սյուներուն ընդմեջեն
Հետո իրենց սըրտին մեջ վառեց վրեժի մը գեհեն:
Տըրդատ երկար նայեցավ դեպի հրոսակն հալածիչ,
Աչքերեն թույն կ'հոսեին մոլուցքի գույզ մը կարիճ.
Գըրկին մեջ հարձը հանկարծ արձակեց ճիչ մը տրտում.
– «Ո՛վ իմ ասպետս, – ողոգեց, – ո՛հ, մըտրակե՛ անդադրում.
Գերին ըլլամ քու սուրիդ, անոնց գերին մ'ըներ զիս.
Ահա տեգերն ուղղեր են միահամուռ կոկորդիս՝
Ուր համբույրիդ տաքությունը դեռ, ավա՛դ, չէ պաղեր»:
Ըսավ: Թաղեց ասպետին ծոցին մեջ զլուխն ոսկեհեր:
Հա՛րկ էր արդյոք ճակատիլ. ո՛չ. պիտի կռիվն ունենար
Անհավասար հաղթանակ, թեև վըսեր մ'հավասար:
Ու Տըրդատես թոթվեց սանձն երիվարին հողմասլաց,
Երկրադըրդորդ թընդաց դռույթն, փոշին ելավ, և սուրաց,
Ու ըսկըսավ հալածումն հըսկաներուն սանձարձակ:
Ողոգեց հարձը նորեն.– «Ո՛վ իմ ասպետըս վրիժակ,
Ես կը տեսնեմ անութիդ տակեն զանոնք՝ որ կ'իջնեն
Բըլուրն ի վար, աչքերնին մեյ մեկ անդունդ լուսեղեն.
Հարյուր ձիեր կարկառեր են վիզերնին դեպի մեզ,
Որոնց շունչերը կ'ելլեն պինչերնեն տաք մոխրի պես:
Օ՛, մտրակե՛, մտրակե՛, երբ բըռնեն զիս՝ վագրի նման
Պիտի կրծեն ոսկորներս, լակեն արյունըս լըման»:
– «Հեղեղին մեջ մագերուդ փակե աչքերդ, իմ Աղվոր,
Եվ կուրծքիս վրա քընացիր օրորումով այս հըզոր,
Անոնք այստեղ չըհասած՝ մենք Շիրակ ենք գիրկ գըրկի»:
Ու լայնալանջ երիվարը մըտրակեց ուժգնակի:
Անցավ խորունկ փապերեն, հեղեղատեն մեծագոգ,

Ընկրդմեցավ խորն հովտին, ճեղքեց ավազն հրաբորբոք.
Եվ ուղղաբերձ, մեծաշունչ, համբարտակեց սարն հըսկա
Թավալելով հետք ի վար ապառաժներ՝ որոնց վրա
Լուսնանըման կուռ պայտերն իրենց դրոշմը դրրին.
Ճապուռներուն մեջ որսն իր սեղմելով միշտ ավելի.
Ժայռերն ի վար խոյացավ ջրովեժին պես փրփրալի՝
Հորձանքին մեջ տանելով լերան ծաղիկ մը կարմիր
Իբրև դաշտին մեկ ընծան տըրված վիհին լայնադիր:
Ու մըտրակե՛ց, մըտրակե՛ց, երբոր հանկարծ լըսվեցան
Իր ետևեն սուլումները նետերու դավաճան:
– «Ասպե՛տ, ասպե՛տ, մահն հասավ մեր թիկունքեն, կը շչա:
Օ՛, կը վախնա՛մ, կը վախնա՛մ. ուսիդ վրայեն նետ մ'ահա
Հըրախայթոց օձի պես շըշըչալով սըլացավ:
Վայրկյա՛ն մըն ալ և անոնք կու գան կ'հասնին մեծարշավ.
Աղեղներեն լայնալիճ կարծես արյուն կը կաթի
Եվ կը ներկե ձիերուն հորդ հորդ բաշերը կաթի:
Ասպե՛տ, ասպե՛տ, մի մատներ զիս անոնց խեռ մոլուցքին,
Ես քու գերին, ձիդ ըլլա թող գերին քու մըտրակին»:
Այսպես ըսավ Նազենիկ. լալ ըսկըսավ դառնահեծ,
Եվ Տըրդատի կուրծքին վրա գըլուխը այնքա՛ն սաղմեց՝
Որ գրահին մեջեն իսկ կը լսեր տրոփը սըրտին:
Գանգուրներն իր հողմածուփ ձիուն բաշին կը խառնվին.
Ինք կը սարսռա վարմն ինկած աղավնիի մ'հանգունակ:
Մարսափելի էր տարափը նետերուն մահարձակ՝
Որոնք ջուրի նըման օդն եռանդահորձ ճեղքելով
Կ'երթային մահ երգել փախըստական գույզին քով:
Այն ժամանակ Տըրդատես գլուխն իր դարձուց մըրրկահեր
Եվ հեզնորեն մըռընչեց.– «Հալածեցեք, դե՛հ, գայլե՛ր,
Մինչև շընչատ վար կախվին ձեր լեզուները դողդոջ.
Արձակեցե՛ք կըռնակիս ձեր ասեղները կընոջ»:
Ըսավ. և նժույզն այս անգամ խթեց այնքան ուժգնալի՝
Որ արշավանքն եղավ շտապ մըտածումեն ավելի:
Ահա ձո՛րն ինք կը սուզի, սարի՛ն մյուսները կ'ելլեն.
Կը փայլակե ինք սարին, անոնք ձորին խորերեն
Կը փոթորկվին: Եվ նըման գույզ մ'ամպրոպի մոլեկան
Լեռնահարթին վրա անգամ մ'այնքա՛ն իրար մոտեցան,
Որ պիտի շանթը ճայթեր, պիտի պոռթկար նետն արյուն՝
Եթե Տըրդատ ըզգեցած չըլլար քեմուխտ հաստատուն:
Անոնց հանած փոշիներն իրար միացան՝ կազմելով
Հըրատապ ամպ մը խարտյաշ՝ կարծես հըղի արյունով:

Այն ժամանակ պիտ' հագիվ արձակեր տեգն իր Բակուր՝
Որ ճեղքե թիկն ասպետին, և հարձին լանջը փըրփուր,
Երբ վիհ մ'հանկարծ դժոխորկոր լերան գըլխուն փեռեկված
Արհավիրքով մ'ընկրկեց հալածողները սրընթաց:
Ճողոպրեցավ Տըրդատես, և լեռն ի վար ուղղակի
Դիմեց անտառ մը մըռայլ՝ որ սահմանն էր Շիրակի:
Բակուրի խումը կեցավ հառաչակույ, ոգեսպառ,
Կատաղության խարույկով ամբողջովին բոցավառ:
Ա՛լ հուսահատ՝ աղեղները պըրկեցին տըղընդեր,
Լարերն եղան լայնալիճ, անձրևեցին փըքիններ.
Նեռե դատարկ կապարճներն եկան լեցվիլ վրեժ ու ոխ:
Հագիվ թե ծոցն անտառին կ'ընդգոգեր գույզը փախչող՝
Բակուր իր նետը վերջին, հերձակ մ'ամբողջ ժահրաշիթ,
Արձակեց այնքա՛ն գորեղ, թիրախին ա՛յնքան ճըջգրիտ,
Որ օձի նման շչալով թունոտ լեզվովը սաղապ
Տըրդատեսի անութին տակեն սողոսկ անցավ թափ,
Ու մըխվեցավ վարձակին ծոծրակին մեջ լուսաբուխ
Եվ հոն մընաց՝ հորդառատ մագերուն մեջ խորամուխ:
Երեք անգամ սըրսըփաց զարնված աղվոր աղավնին,
Երեք անգամ չուզելով կարծես թողուլ իր հոգին:
Այս բանը ո՛չ Տըրդատես նըկատեց, ո՛չ ալ Բակուր,
Իրենց անգուսպ մոլուցքին փոշիներեն դարձած կույր.
Բնավ չըտեսան թե ի՛նչպես կը փըշրվեր ու կ'իյնար
Դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար.
Միայն նըժույզը վըրնջեց, ու երեք հեղ սարսըռաց
Երբ սառեցավ փորին վրա զարնըվող ոտքը հանկարծ:

Դ

Իջևան մ'է կառուցված սահմանին վրա Շիրակին,
Գործ արքունի ճոխության, մեծազանգված, ահագին:
Լայն դըռներն իր կը բացվին ճամբուն վըրա հրատոչոր
Դուրս շընչելով գովություն և աղբերուն հոտը չոր:
Արևուն դեմ կիզանուտ ապաստան մ'է մըշտագով
Ճամբորդներն հոն կը հասնին տոթեն թխացած ծոցերով
Եվ հոնքերնին բեռնավոր փոշիներով տապախարշ.
Հո՛ն կը հասնին սայլերն հույլ գոմեշներե ծանրաքարշ,
Եվ կաղացող ջորիներն ու կարավանն էշերու
Քաղցրաողկույզ խաղողին կողովներուն տակ հըլու:
Հո՛ն կը հասնին շար ի շար ուղտերը հաղթ՝ բեռնավոր
Տարաշխարհի զանազան համեմներով քաղցրածոր

Եվ կը պատկին ծընկածալ, խըրոխտավիզ, կ'որոճան
Անձանոթ խոտն հեռավոր երկիրներուն արփական:
Թանձրակառույց իջևանը բարիք մ'է երկնատու
Երբ կը հըսկե ճամբուն վրա՝ որուն ծայրերը երկու
Հորիզոնին խորհուրդին մեջ տաղտկորեն կ'անհետին,
Երբ կը վառե անկենդան լըռության մեջ լեռնային
Իր պանդուխտի օճախներն ամեն մարդու անխըտիր
Եվ հոն ամռան ջերմությունը մարելու ի խընդիր
Թանին ալիքը կը հոսի երակներու մեջ ծարավ:
Բայց միշտ հասնիլն հոն, անկե մեկնելէն քաղցըր չէ բնավ:
Ավասիկ այդ իջևանն է՝ ուր կու գա Տըրդատես
Ապաստանիլ նետերուն և արևուն դեմ հրակեզ:
Ծալքերուն մեջ թիկնոցին և կուրծքին վրա զրահակուռ
Պարուրված է Նազենիկ մարմարի պես ջարդուփշուր.
Այլևս, ո՛հ, չի հուզեր ոչ մեկ սարսուռ, ոչ մեկ վանկ
Չըքնաղ մարմինն իր սառած լուսարձանի մ'հանգունակ:
– «Արդյոք քնացա՞վ (կը խորհի՝ ասպետն հասած իջևան)
Թե սարսափեն մարեցավ, ճըրագի պես, կուրծքիս վրան:
Ի՛նչպես կըրնա սալանալ այդքան եռանդ մ'հանկարծույն
Եվ տարածվիլ սըրտիս վրա շիրմաքարի մը հանգույն»:
Խորհելով այսպե՛ս Տըրդատ վար կը ցատկե նըժույզեն
Եվ կ'իջեցնե վարձակն ալ, բայց աչքերն իր կը տեսնեն
Մազերուն մեջ Բակուրի նետն ըսպաննիչ, արյունն հիր՝
Որ հոսած է ծոծրակեն ժապավենի պես կարմիր:
Կընոջ մարմինը անշունչ գիրկը կ'իյնա ցըրտագին.
Կատաղություն ահավոր ասպետական խաբկանքին...
Մազերն ամբողջ կը քըստմնին՝ երբ սիրտն անոր կը տեսնե
Տիեզերքի մը սըրտին նըման՝ դադրած տրոփելէ,
Երբ կը խորհի թե կինն այդ մեկ թարթափին մեջ աչքին
Գեղեցկության հեթանոս ուներ գանձերը անգին,
Թե իր մարմինն է լոզցած երկնի շողովը անշեջ,
Մեղը ուներ իր թուշին տակ, լույս ուներ իր ծիծին մեջ,
Եվ իր ձեռքին ու ոտքին մատերուն ծայրն էր խըտացած
Տիեզերքն այս հարդագող ճարտարությունն առեղծված.
Եվ խորհեցավ վերջապես՝ սրահին մեջ Բակուրին
Աստվածացումն իր միսին, փոթորկումները պարին,
Եվ առջի հեղ ըլլալով ապառաժ մարդն այդ լացա՛վ...
–Ո՛վ պատրանքի արցունքներ հերոսներուն մեծ համբավ,
Որոնք երբեմըն սըրտի խորեն կ'հոսին տըխրամած
Հին օրերու հաղթության պըսակներուն վրա դեղնած:

Ե

Բարտի մը կար հինավուրց՝ զոր ձեռքերովն իր բարի
Իջևանին քով տընկեր էր Դիցանույշ մ'անտառի.
Մակայն այդ օրն ոսոտ առ ոսոտ ան կը չորնար տրտմորեն
Տերևներն իր դալկահար հողին վրա ողբալեն:
Ո՛վ գիտե ո՛ր մըրրկածուփի գիշերվան մեջ Արամագո
Զարկեր պատռեր էր անոր սիրտն իր շանթով մեծասաստ.
Եվ գըլուխն իր գեղուղեշ՝ որ կը հասներ արևին՝
Արդ սոսափներ չէր երգեր, կը նիզակվեր դեպ երկին:
Հո՛ն, ահա այդ բարտիին շուրջը եկան հավաքվիլ
Անտառաբնակ չորս քուրմեր կընգուղ ու ջանջիլ,
Ու Տըրդատի հրամանով անոր բունին ճիշտ ներքև
Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.
Ու երգեցին Աստղիկին: Տըրդատ սըրտեն շանթահար՝
Անոր դեռ թա՛րմ դիակն առած գրկին մեջ կու լար:
Երբ գայն փոսին հանձնեցին՝ մազերուն մեջ շաղապատ
Դեռ Բակուրի նետն ոսկի կը փայլակեր լուսացայտ:

Իջևանի քով տնկված վաղընջական այն բարտին
Վերընձյուղում մ'ըստացավ՝ բուժելով վերքն իր սրտին՝
Երբոր Հարձին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ
Թաթախվեցան հողին տակ արմատներն իր խորդուբորդ,
Եվ ըսվեցավ թե անոր տերևուտքին մեջ դողդոջ
Չըքնաղ հոգին վարձակին բընակեցավ դար մ'ամբողջ,
Լուսնկային ժըպտեցավ, ծոծրակին վերքը տվավ ցույց,
Հովերուն հետ պար եկավ, բամբիռներն իր հնչեցուց: